

ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի
ղեկավարը հայտարարում է մրցույթ աշխատակազմի
առաջատար մասնագետների (ծածկագիր 3.1-1 և
ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության
թափուր պաշտոններ զբաղեցնելու համար
15.02.2019

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)
Հայտատու՝ Գեղակերտ համայնքի ղեկավար
«ՀԾՄ» ՀՀ օրենք 14-րդ հոդված
Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարը
հայտարարում է մրցույթ Գեղակերտի համայնքապետարանի
աշխատակազմի առաջատար մասնագետների
(ծածկագիր 3.1-1 և ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության
թափուր պաշտոններ զբաղեցնելու համար

1. Գեղակերտի համայնքապետարանի առաջատար մասնագետը՝
(ծածկագիր 3.1-1)
 - ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին
և պատշաճ որակով.
 - բ) կազմում է համայնքի բյուջեի նախագիծը.
 - գ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական
տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ
որոշման նախագծերի նախապատրաստական աշխատանքներին.
 - դ) քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է
հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի
կազմման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման,
ամփոփման և ներկայացման աշխատանքները.
 - ե) քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի
միջոցների նպատակային օգտագործումը.
 - զ) քարտուղարի հանձնարարությամբ կազմում և ստորագրում է
ֆինանսական փաստաթղթերը.
 - է) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում
նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր
աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ,
տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և
այլ գրություններ.
 - ը) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը
և լրացնում համապատասխան փաստաթղթեր.

թ) հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.

ժ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

ժա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «< Հաշվապահական հաշվառման մասին >>, «< Բյուջետային համակարգի մասին >>, «< Գանձապահական համակարգի մասին >>, «< Համայնքային ծառայության մասին >>, «< Տեղական ինքնակառավարման մասին >>, «< Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. Գեղակերտի համայնքապետարանի առաջատար մասնագետը՝ (ծածկագիր 3.1-2)

ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին.

գ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողազավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին.

դ) քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին.

ե) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

զ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր.

է) հետևում է քարտուղարի հանձնարարականների

համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.

ը) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

թ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Հողային, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2019 թվականի մարտի 18-ին. ժամը 12:00-ին և 14:00-ին՝ համապատասխանաբար՝ Գեղակերտի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք Գեղակերտի համայնքապետարան կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ձանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

- մեկ լուսանկար 3X4 սմ չափի
- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքապետարան (հասցե՝ Մ. Մաշտոցի 30, հեռ.077 350489) և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի մարտի 04-ը ներառյալ:

Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Գեղակերտ Մաշտոցի30
Հեռ..՝ 077350489
Էլ. փոստ՝ ggeghakert@mail.ru